ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

"ԱՅՍՄՈՔ" ՍՊԸ-ն ԵՊԵԱՃ26-5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
65	«Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ	Me-Ga Clean	«Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ	1. «ՄԵ-ԳԱ ՔԼԻՆ» ախտահանիչ միջոցը իրենից ներկայացնում է էթիլ սպիրտի և կիրառվող բուրանյութի հոտով թափանցիկ հեղուկ: Որպես ազդող նյութեր՝ միջոցը պարունակում է էթիլ սպիրտ՝ 69,0±1,0%, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, այդ թվում մաշկը խնամող բաղադրիչներ, ջուր: 2. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիաները, թեստավորված Mycobacterium terrae-ի վրա, ներհիվանդանոցային վարակների հարուցիչները՝ թեստավորված Pseudomonas aeruginosa-ի վրա, այդ թվում աղիքային ցուպիկը, ստաֆիլակոկերը, սալմոնելլաների խմբի մանրէները), լեգիոնելոզի, հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա), վիրուսների՝ այդ

				թվում ռինովիրուսների, նորովիրուսների, ռոտավիրուսների, ադենովիրուսների, ընդերային և արտաընդերային հեպատիտների՝ ներառյալ հեպատիտ Ա-ի Բ-ի, Ց-ի, Դ-ի, պոլիոմիելիտի վիրուսների, Կոքսակի էնտերովիրուսների, ECHO, ՄԻԱՎ վիրուսների, գրիպի վիրուսի, այդ թվում՝ «խոզի» H1N1 և «թռչնի» H5N1, պարագրիպի, կորոնավիրուսի, «ատիպիկ թոքաբորբի» հարուցչի (SARS, MERS), հերպեսի, կարմրուկի, սուր շնչառական վիրուսային վարակների, ցիտոմեգալովիրուսային վարակի, սնկասպան ակտիվությամբ Կանդիդա և Տրիխոֆիտոն ցեղի սնկերի նկատմամբ: Միջոցն օժտված է երկարաձգված հակամանրէային ազդեցությամբ 3 ժամվա ընթացքում: Միջոցով մշակումից հետո լվացում չի պահանջվում: 3. Միջոցը նախատեսված է ձեռքերի հիգիենիկ մշակման համար, սպիրտների ազդեցության նկատմամբ կայուն մակերեսների արագ ախտահանման և չորացում պահանջող պայմաններում կիրառման համար, ոչ մեծ մակերեսով մակերևույթների, ինչպես նաև սենքերում դժվարհասանելի մակերեսների (հատակ, պատեր և այլն) ախտահանման համար, ախտորոշիչ սարքավորումների (ՈՒՁՀ և այլ) և այլ համանման բժշկական արտադրատեսակների մակերեսային (մաշկին դրվող) տվիչների, որոնք թույլ են տալիս շփման եղանակով ախտահանում, ախտահանման համար: ԵՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 15.12.2022թ. թիվ 5787-Ա:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АЙСКОМ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЬҬЕЦӼ26-5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
65				